Ի Ա.

Ելնես դու քո ի տանէն զինչ ելնէ արեւն ի մօրէն:
Ծագէ լոյս ի քո ծոցէդ զինչ գարնան կայծակն ի ամպէն.
Շատ երէց, շատ աբեղայ իջուցեր քո սէրդ ի բեմէն.
Զիս այլ սիրու տէր արեր, վըտարեր իմ հօրն ի տանէն:

Ի Բ.

Ասես թէ կտրած ես դու ի ճերմակ որթոյդ խաղողէն.
Վանց ըզքո մահպուպ սուրաթդ ի վարդին սուլթան տերեւէն.
Ես ըզքեզ սիրել կամիմ, թող ճօշան զիս երկիրն ամէն.
’Ի ի ծոցըդ մտնուլ կամիմ, թէ հազար թուրք ես ’ւ անօրէն:

Ի Գ.

Աչերդ է ծովէն առած ու ուներդ ի թուխ ի ամպէն:
Այդ քո պատկերքդ եւ սուրաթդ ի վարդին կարմիր տերեւէն:
Ուր որ դու կանգնած լինիս, չէ պահեի վառեն մոմեղէն:
Ծոցուդ լոյսըն դուրս ծագէ, քէմ ելնէ մեռելն ի հողէն:

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Իմ եարս ’ւ ես մէկտեղ եկաք, բռնեցաք մեք զԱստուած վըկայ.
Մեծ ղավլ ու երդում արաք՝ Գօթենա՛ յ ով սէրն ուրանայ:
Խօ՛յ եար, թ’ուրանաս դուն զիս, ստեղծօղէն զաւալ քեզի գայ.
Զէրայ սիրու տէր արիր, այս խալխին լեզուն ի վըրայ:

Բ.

Հա՛յ իմ ճերմակ ծոց բազայ, ճերմակ ծոց ու ծինն ի վըրայ.
Քո բունդ է անտառ մորին ’ւ արթըւին ահիկն ի վըրայ.
Երթամ քաջ արծիւ լինամ, գամ կըռուիմ մինչ որ լուսանայ.
Թ’ ապրիմ նա անուն հանեմ, թէ մեռնիմ՝ հաշուեմ թէ չեղայ:

Գ.

Ահա կու գընամ, հոգե՛կ, լուկ ուրախ կացիր ու խնդա՛,
Նա դու բարձր անցի՛ր ՛ւ ասա՛ թէ բարով ես խալըսեցայ.
Թուխ ամպ եմ դէմ քո աչիչդ. պահ մի որ այս ամպս վերանայ,
Այնժամ ես քեզ պիտենամ՝ մինչեւ գայ խելքունքդ ի վերայ: